ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն, տ.գ.թ. Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան

ԵՊՀ Բանբեր, Երևան 2011թ., 133.5, էջ 57-66

Միջազգային միգրացիան և դրա աճի միտումը ներկայիս համաշխարհային տնտեսության գլոբալացման արդյունքն են: Ժամանակին համընթաց միգրացիան ավելի մեծ ազդեցություն է ունենում ուղարկող և ընդունող երկրների տնտեսական, սոցիալական, մշակութային, անվտանգության և շրջական միջավայրի վրա:

Միջազգային միգրացիան ստեղծում է հնարավորություններ և մարտահրավերներ ուղարկող ու ընդունող երկրների համար: Արտագաղթի մեծ խավալներ ունեցող երկրների համար եկամտի և ՀՆԱ-ի մակարդակը կախված է արտասահմանում ապրող և աշխատող միգրանտների եկամտի չափից: Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների՝ 2008 թ. բանկային համակարգի միջոցով արտերկրներից ստացված փոխանցումները կազմել են ավելի քան 2.2 մլրդ ԱՄՆ դոլար, որը կազմել է ՀՀ տնտեսության ՀՆԱ-ի գրեթե 18.5%-ը[1]: 2009 թ. արտերկրներից ստացված փոխանցումները կազմել են մոտ 1.5 մլրդ ԱՄՆ դոլար: Փոխանցումների նման անկումը (30.6%) հիմնականում պայմանավորված է 2008 թ. սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով:

Տնտեսագիտության մեջ միգրացիան համարվում է անհատի որոշում, որը փորձում է իր օգտակարությունն առավելագույնի հասցնել՝ ելնելով ինստիտուցիոնալ և աշխատուժի շուկայի սահմանափակումներից: Հաստատված է, որ միգրացիան ուղղակիորեն կախված է տարածաշրջանների կամ երկրների միջև աշխատավարձերի կամ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի տարբերության մակարդակից[2]:

Մյուս կողմից միգրացիան նաև ուղղակիորեն կախված է նաև տարածաշրջանների կամ երկրների միջև առկա գործազրկության մակարդակից[3]: Կան բազմաթիվ աշխատանքներ, որտեղ հիմնավորվում է գործազրկության և միգրացիայի միջև առկա ուղիղ կապը: Սակայն այստեղ հարկ է նշել, որ հաճախ գործազրկության մակարդակն ածանցյալ է աշխատավարձի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի չափերից: Այսինքն՝ այլ հավասար պայմաններում, որքան բարձր է

[1] Տես http://www.cba.am/CBA_SITE/statistics/statdate.html?__locale=hy: Ինտերնետային կայքի այցը՝ 19.10.2011 թ.:

[2] Տես Gould, J.D., European inter-continental emigration 1815-1914: Patterns and Causes, Journal of European Economic History, Vol.8, 1979 թ., էջ 593-679, Greenwood M.J., Human Migration: Theory, Models and empirical studies, Journal of Regional Sciences, Vol.25, 1985 թ., էջ 521-544:

[3] Տես Hatton, T.J., A Model of UK Emigration, 1870-1913, Review of Economic Statistics, Vol.77, 1995 թ., էջ 407-415:

աշխատավարձի մակարդակը կամ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, այնքան ցածր է գործազրկության մակարդակը:

Այնուամենայնիվ, Ստարկը և Թեյլորն իրենց աշխատանքում փորձեցին հիմնավորել, որ միգրացիան չի կարող միայն բացատրվել երկու երկրների միջև աշխատավարձերի տարբերությամբ: Նրանց կարծիքով, աշխատանքային պայմանները, ձեռնարկչատիրական գործունեության համար առկա կապիտալը և երկարաժամկետ հատվածում ռիսկի կառավարման հնարավորությունը նույնպես որոշիչ դեր են կատարում միգրացիայի համար[4]:

Ավելին, համաձայն վերջին հետազոտությունների, միգրացիան դիտարկվում է ոչ միայն որպես անհատի որոշում, ով փորձում է իր օգտակարությունն առավելագույնի հասցնել, այլև ընտանիքի որոշման արդյունք[5]:

Այսպիսով, միգրացիայի վրա ազդող գործոնները կարելի է դասակարգել ըստ տնտեսական, ժողովրդագրական, ֆիզիկական տարածության և «ցանցային» կապերի գործոնների:

Այսպես, համաձայն տնտեսական գործոնների՝ անհատի շարժունության որոշման վրա մեծ ազդեցություն է ունենում սպասվող եկամտի մակարդակը, որը նա ակնկալում է ստանալ մեկ երկրից մյուսը տեղափոխվելով:

Ըստ ժողովրդագրական գործոնների՝ միգրացիայի վրա առավել մեծ ազդեցություն կարող են գործել տարիքը, կրթվածության աստիճանը և ընտանեկան վիճակը: Այլ հավասար պայմաններում երիտասարդները շատ ավելի շարժուն են, քան տարեց մարդիկ, և բարձր որակավորում ունեցող աշխատողները շատ ավելի շարժուն են, քան ցածր որակավորում ունեցողները:

Վերջին ժամանակաշրջանում միգրացիոն հոսքերը վերլուծելիս մեծ ուշադրություն է դարձվում ֆիզիկական տարածության վրա, որը կարող է զսպել միգրացիոն հոսքերը մի քանի պատճառով: Նախ՝ ֆիզիկական տարածությունն ուղղակի ծախս է միգրացիայի համար, քանի որ դժվարացնում է երկրի կամ տարածաշրջանի վերաբերյալ տեղեկատվություն ստանալը: Մյուս կողմից, ֆիզիկական տարածության մեծացման հետ մեկտեղ կարող են ավելանալ նաև մշակութային տարբերությունները: Այս համատեքստում հարկ է նշել, որ բացի ֆիզիկական տարածությունից, ունենք նաև հոգեբանական տարածություն, որը որոշվում է մշակութային նմանություններով և կարող է մեղմել ֆիզիկական տարածության զսպող ազդեցությունը միգրացիայի վրա:

Եվ վերջապես, միգրացիայի վրա մեծ ազդեցություն է ունենում «ցանցային կապերի» առկայությունը: «Ցանցային կապեր» ասելով առաջին հերթին մենք նկատի ունենք սփյուռքի

[4] Տես Stark O. and Taylor J., Migration incentives, migration tapes: The role of relative deprivation, Journal of Economics Vol. 101, 1991 թ., էջ 1163-1178:

[5] Տես Hugo J., The demographic underpinnings of current and future international migration in Asia, Journal of Asian Pacific Migration Vol. 7, 1998 թ., էջ 1-25:

առկայությունը: «Ցանցային կապերի» մեջ կարելի է ներառել նաև ընտանիքների վերամիավորումը:

Վերլուծելով Հայաստանի միգրացիոն հոսքերը՝ կարելի է փաստել, որ Հայաստանը հիմնականում ունի արտագաղթի խնդիր (ամբողջ բնակչության 26.9%-ը), իսկ ներգաղթը չնչին է (ամբողջ բնակչության 3.8%-ը) և ներգաղթողները հիմնականում ազգությամբ հայեր են[6]:

Այսպես, սկսած 1990-ական թվականներից, արտագաղթի հիմնական պատճառ է հանդիսացել Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը: Ըստ որոշ գնահատումների՝ 1990-ական թվականներին ավելի քան 800 հազ. մարդ կամ ամբողջ բնակչության 25.0%-ը լքել է Հայաստանը: Արտագաղթողների ավելի քան 75%-ը տեղակայվել է նախկին Խորհրդային Միության երկրներում (հատկապես Ռուսաստանում և Ուկրաինայում), 15%-ը՝ եվրոպական տարբեր երկրներում և 10%-ը՝ ԱՄՆ-ում[7]:

Այս համատեքստում հարկ է նշել, որ արտագաղթը շատ լուրջ բացասական ազդեցություն կարող է ունենալ հարաբերականորեն փոքրաթիվ բնակչությամբ կամ ժողովրդագրական խնդիրներ ունեցող երկրների համար: Այդ բացասական հետևանքները կարող են ընդգրկել ինչպես տնտեսական, քաղաքական, մշակութային, այնպես էլ ընդհուպ ազգային անվտանգության/կայունության մակարդակները: Օրինակ՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից կարող ենք նշել, որ արտագաղթը զգալի բացասական ազդեցություն կարող է ունենալ ՀՀ տնտեսության զարգացման վրա: Այսպես, 1998-2008 թթ. տնտեսապես ակտիվ բնակչությունը Հայաստանում 1.47 մլն մարդուց կրճատվել է մինչև 1.19 մլն-ի[8]: Եթե սկզբնական շրջանում տնտեսապես ակտիվ բնակչության կրճատումը մեղմել է գործազրկության մակարդակը, ապա տնտեսության զարգացմանը զուգընթաց դա կարող է լրջորեն խոչընդոտել տնտեսական աճին: Մյուս կողմից արտագաղթի բացասական ազդեցությունը երկրի տնտեսության վրա ավելի է ուժեղանում «ուղեղների արտահոսքի» դեպքում:

Հայ արտագաղթողների ուղղվածությունը որոշվել է ընդունող երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններով, մուտքի արտոնագրի պահանջներով, ինչպես նաև ընդունող երկրում առկա հայկական սփյուռքով[9]: Վերջին 15 տարվա ընթացքում Հայաստանից միգրանտների մեծ մասը բաժին է ընկել Ռուսաստանին: Սա առաջին հերթին բացատրվում է մշակութային ընդհանրություններով (խորհրդային պատմություն և ընդհանուր լեզու), Ռուսաստանում առկա հայկական սփյուռքով, ինչպես նաև Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով (2008 թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն Ռուսաստանում կազմել է 11,832 ԱՄՆ դոլար, որը երեք անգամ ավելi է Հայաստանի ցուցանիշից): Ընդհանուր առմամբ

[6] Տես «Migration in Armenia: A Country Profile 2008», International Organization for Migration, Geneva, 2008 թ., էջ 15-17:
[7] Տես Yeganyan Gagik, Migration situation in Armenia: Challenges and solutions, in IOM Migration Perspectives Eastern Europe and Central Asia: Planning and Managing Labor Migration, Vienna, 2006 թ., էջ 18:
[8] Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան, 2009 թ.:
[9] Տես Dzovinar Derderian, Alternative Destinations of Migration, Armenian Journal of Public Policy, Tufts University, 2007 թ., էջ 3:

Հարավային Կովկասի երկրների համար (Ադրբեջան, Հայաստան և Վրաստան) Ռուսաստանը համարվում է հիմնական միգրացիայի ուղղվածության երկիր[10]: Ավելին, Ռուսաստանը ներգաղթի ցուցանիշով ԱՄՆ-ից հետո համարվում է աշխարհում երկրորդ երկիրը: Մյուս կողմից, եթե դեպի Ռուսաստան արտագաղթը հիմնականում կրում է ժամանակավոր կամ կարճաժամկետ բնույթ՝ կապված սեզոնային աշխատանք փնտրելու հետ, ապա դեպի Եվրոպա կամ ԱՄՆ արտագաղթը ոնի երկարաժամկետ կամ մշտական բնույթ՝ կապված մուտքի արտոնագրի պահանջների հետ:

Հայաստանից արտագաղթի վերաբերյալ ավելի լայն պատկերացում կազմելու համար ներկայացնենք արտագաղթի հիմնական ուղղվածության երկրները: Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից, Հայաստանից արտագաղթի հիմնական ուղղվածության հինգ երկրներն են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ուկրաինան, Վրաստանը և Գերմանիան: Եթե փորձենք համեմատություն անցկացնել Հայաստանից և Թուրքիայից արտագաղթողների հիմնական ուղղվածությունների միջև, ապա կարող ենք փաստել, որ Հայաստանի դեպքում արտագաղթի զգալի մասը բաժին է ընկնում Ռուսաստանին, իսկ Թուրքիայի դեպքում՝ Գերմանիային (տես աղյուսակներ 1 և 2):

Աղյուսակ 1 Հայաստանից արտագաղթի հիմնական ուղղվածության երկրներ, 2005 թ.[11]

Երկիր	Արտագաղթողների քանակ	
	Մարդ	%
Ռուսաստան	485 460	59.7
ԱՄՆ	76 364	9.4
Ուկրաինա	69 134	8.5
Վրաստան	20 314	2.5
Գերմանիա	16 663	2.1
Իսրայել	14 939	1.8
Թուրքմենիա	7 807	1.0
Հունաստան	7 788	1.0
Իսպանիա	6 836	0.8
Բելառուս	6 634	0.8
Ֆրանսիա	6 373	0.8
Ղազախստան	5 977	0.7
Այլ երկրներ	86346	10.9
Ընդհանուր	812 700	100.0

Թուրքիան ավանդաբար հիմնականում հայտնի է որպես արտագաղթի երկիր: 1960-ական թվականներից սկսած մեծ քանակությամբ արտագաղթողներ մեկնում էին Արևմտյան Եվրոպա (հատկապես Գերմանիա): Ուստի, սկսած 1960-ական թվականներից, դրամական

[10] Տես A. Mansoor and B. Quillin, Migration and Remittances: Eastern Europe and the former Soviet Union, The World Bank, 2006 թ., էջ 3:
[11] Տես «Development Prospects Group, Migration and Remittances Factbook», The World Bank, 2008 թ.:

փոխանցումները Թուրքիայի տնտեսության համար հանդիսացել են արտարժույթի հիմնական աղբյուրներից մեկը: Թուրքիայից արտագաղթը շարունակվում է մինչև հիմա, սակայն այժմ դրա հիմնական պատճառը ընտանիքների վերամիավորումն է:

Ներկայումս Թուրքիան անօրինական միգրանտների համար տարանցիկ երկիր է Ասիայից (Իրաք, Իրան, Պակիստան և այլն) դեպի ԵՄ: Այսպես, 1990-ական թվականների երկրորդ կեսից սկսած, անօրինական արտագաղթը Թուրքիայից դեպի Եվրոպա աճել է: Որպես անօրինական միգրացիայի հիմնական աղբյուր առաջին հերթին նշվում են Թուրքիայի հարևան երկրները՝ Իրան, Իրաք և Սիրիա, ինչպես նաև Աֆղանստանը և Պակիստանը: Մյուս կողմից, հենց Թուրքիան է իր հերթին դարձել անօրինական միգրացիայի կենտրոն նախկին Խորհրդային Միության երկրների համար[12]: Հիմք ընդունելով Թուրքիայի ԵՄ անդամակցության բանակցությունների գործընթացը՝ Եվրոպական միությունը փորձում է դրա շրջանակներում ստիպել, ինչպես նաև օժանդակել Թուրքիայի կառավարությանը սահմանափակել ու կարգավորել անօրինական միգրացիան դեպի Թուրքիա, որտեղից էլ դեպի Եվրոպա: Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ 2005-2007 թթ. ավելի քան 92 մլն օտարերկրացի հատել է Թուրքիայի սահմանը (մուտք և ելք): Նրանց գերակշիռ մասը բաժին է ընկել Թուրքիայի հարևան, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության երկրներին, Իրանին և Իսրայելին[13]: Իհարկե, այստեղ հարկ է նշել, որ այդ օտարերկրացիների մեծ մասը հանդես է եկել որպես զբոսաշրջիկ, և իրականում շատ դժվար է տարանջատել զբոսաշրջությունը և անօրինական միգրացիան, քանի որ վերջինս սկզբնական շրջանում կրում է թաքնված բնույթ: Այսպես, 2008 թ. տվյալներով Թուրքիա այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 25 մլն մարդ[14]: Թեպետ վերջին տարիներին Թուրքիան մեծ հաջողություններ է գրանցել զբոսաշրջության ոլորտում, Թուրքիա այցելած զբոսաշրջիկների մի մասը կարող է հետագայում դառնալ անօրինական միգրանտ:

Աղյուսակ 2 Թուրքիայից արտագաղթի հիմնական ուղղվածության երկրներ, 2005թ.[15]

Երկիր	Արտագաղթողների քանակ	
	Մարդ	%
Գերմանիա	2706232	61.5
Ֆրանսիա	197819	4.5
Նիդերլանդներ	184424	4.2
Ավստրիա	153836	3.5
ԱՄՆ	100325	2.3
Սաուդյան Արաբիա	95752	2.2

[12] Տես Kemal Kirisci, Turkey: A Transformation from Emigration to Immigration, Migration Policy Institute, 2003թ., էջ 5:

[13] Տես Kemal Kirisci, Managing Irregular Migration in Turkey: A Political-Bureaucratic Perspective, European University Institute, The Robert Shuman Center for Advanced Studies, 2008 թ., էջ 1:

[14] Տես «World Development Indicators », World Bank, 2010 թ.:

[15] Տես «Development Prospects Group, Migration and Remittances Factbook», World Bank, 2008 թ.:

Երկիր	Արտագաղթողների քանակ	
Բուլղարիա	95248	2.2
Հունաստան	66402	1.5
Շվեյցարիա	61861	1.4
Մեծ Բրիտանիա	60110	1.4
Բելգիա	46324	1.1
Իսրայել	41162	0.9
Այլ երկրներ	163963	13.3
Ընդհանուր	4402914	100.0

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, Թուրքիայից արտագաղթի հիմնական ուղղվածության հինգ երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Նիդերլանդները, Ավստրիան և ԱՄՆ: Եթե Հայաստանից Ռուսաստան արտագաղթի մեծ ծավալները պայմանավորված են մշակութային ընդհանրություններով, ապա Թուրքիայից Գերմանիայի դեպքում դա պայմանավորված է եղել երկկողմանի աշխատանքային պայմանագրերով, որոնք լայն տարածում են ունեցել 1970-ական թվականներին: Արդյունքում 1970-ական թվականներին մեծ թվով «հրավիրյալ» աշխատողներ իրենց ընտանիքներով մեկնեցին Արևմտյան Գերմանիա՝ աշխատելու և հետագայում մշտական բնակություն հաստատեցին այդտեղ:

Վերլուծելով Հայաստանից և Թուրքիայից արտագաղթի հիմնական ուղղվածությունները՝ կարող ենք նշել, որ ոչ Հայաստանը Թուրքիայի համար և ոչ էլ Թուրքիան Հայաստանի համար հիմնական արտագաղթի ուղղվածության երկրներ չեն: Այնուամենայնիվ, ըստ տարբեր գնահատումների, այսօր Թուրքիայում բնակվում են 30 հազ. մինչև 60 հազ. հայ անօրինական միգրանտներ:

Վերջերս Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությունն իրականացրել է մի հետազոտություն, որը նվիրված է Թուրքիայում հայ միգրանտների վիճակի վերլուծությանը: Համաձայն այդ հետազոտության՝ 2002-2007 թթ. Հայաստանից արտագաղթը դեպի Թուրքիա ավելացել է: Ավելին, դեպի Թուրքիա արտագաղթած հայերը հիմնականում ունեն անօրինական միգրանտների կարգավիճակ[16]: Համաձայն հայ միգրանտների պնդումների՝ նրանք զգում են, որ Թուրքիայի կառավարությունը չի պատրաստվում նրանց դուրս հանել երկրից:

Այն փաստը, որ Թուրքիայի կառավարությունը կոնկրետ ճնշումներ չի գործադրում հայ անօրինական միգրանտների հանդեպ, մեր կարծիքով, կարող է ունենալ մի քանի բացատրություն: Առաջին՝ դա պայմանավորված է որոշակի քաղաքական նկատառումներով, երկրորդ՝ տնտեսական որոշակի գործոններով: Օրինակ՝ հայ անօրինական միգրանտները, որպես էժան

[16] Տես Alin Ozinian, Determining the State of Armenian Migrants in Turkey, Eurasia Partnership Foundation, 2009 թ., էջ 14:

աշխատուժ ապրելով և աշխատելով Թուրքիայում, նպաստում են տնտեսության զարգացմանը: Հայերը սովորաբար կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնցից բնիկները հրաժարվում են:

Ըստ նույն հետազոտության՝ Թուրքիայում բնակվող հայ անօրինական միգրանտների գրեթե 95%-ը կանայք են: Հայ կանայք ավելի շատ են նախընտրում աշխատել Թուրքիայում, քանի որ աշխատանքների մեծ մասը, որոնք անօրինական միգրանտները կարող են կատարել, հարմար է իրենց(տնային աշխատող, երեխաների կամ ծերերի խնամք և այլն)[17]:

Այն փաստը, որ վերջին շրջանում զգալիորեն ավելացել է արտագաղթը դեպի Թուրքիա պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին՝ մուտքի արտոնագիր ստանալու դյուրինությամբ, երկրորդ՝ հարաբերականորեն մոտ ֆիզիկական տարածությամբ, որը ապահովում է համեմատաբար էժան ճանապարհածախս ցամաքային երթուղու դեպքում և համեմատաբար լիարժեք տեղեկատվություն երկրի վերաբերյալ: Եվ վերջապես, դա պայմանավորված է Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

Ավելին, պետք է ենթադրել, որ հայ-թուրքական սահմանի հնարավոր վերաբացման դեպքում, միգրացիոն հոսքերը Հայաստանի և Թուրքիայի միջև կարող են ավելանալ: Ներկայումս իհարկե շատ դժվար է կանխատեսել Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի վերաբացումից հետո հնարավոր միգրացիոն հոսքերի զարգացումները: Սակայն կան բազմաթիվ գործոններ, որոնք հետագայում սահմանի վերաբացումից հետո կարող են խթանել Հայաստանից դեպի Թուրքիա արտագաղթը: Դրանց թվին կարելի է դասել Թուրքիայի անհամեմատ զարգացած տնտեսությունը (2008 թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն Թուրքիայում կազմել է 9942 ԱՄՆ դոլար, իսկ Հայաստանում՝ 3872 դոլար) և հայկական սփյուռքի առկայությունը այնտեղ: Ըստ որոշ գնահատումների՝ այսօր Թուրքիայում հայկական սփյուռքը կազմում է ավելի քան 80 հազ. մարդ[18]: Եվ վերջապես, հետագայում՝ սահմանի վերաբացումից հետո, ամբողջ ուժով կգործեն նաև ֆիզիկական և հոգեբանական տարածության էֆեկտները:

Ներկայումս համաշխարհային տնտեսության մեջ բուռն կերպով զարգանում են տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացները, իսկ տարածաշրջանի երկրների հետագա զարգացումը պայմանավորված է այդ գործընթացներից ետ չմնալով: Տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների զարգացման հիմքում ընկած է հարևան երկրների տնտեսական փոխկապակցվածությունը: Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնցում փորձ է արվում համադրել և ցույց տալ հարևան երկրների առավելությունները արտաքին տնտեսական հարաբերություններում: Այս համատեքստում սահմանի վերաբացումից հետո և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների շնորհիվ միգրացիոն հոսքերը երկու երկրների միջև զգալիորեն կավելանան: Մյուս կողմից՝ միգրացիոն հոսքերի ավելացումն իր հերթին կարող է բերել երկու երկրների միջև ձեռնարկչատիրական կապիտալի շարժի

[17] Տես Alin Ozinian, Determining the State of Armenian Migrants in Turkey, Eurasia Partnership Foundation, 2009 թ., էջ 17:
[18] Տես Dzovinar Derderian, Alternative Destinations of Migration, Armenian Journal of Public Policy, 2007 թ., էջ 4:

աշխուժացման: Այլ հավասար պայմաններում երկրների միջև կապիտալի շարժունությունը շատ ավելի մեծ է, քանի աշխատուժինը, քանի որ աշխատուժի շարժունության դեպքում հոգեբանական որոշ գործոններ լուրջ խոչընդոտ են:

Սակայն, մեր կարծիքով, մշակութային և ինստիտուցիոնալ արգելքները կարող են լուրջ խոչընդոտ լինել միգրացիայի համար: Նույնիսկ այն դեպքում, երբ աշխատուժն ազատ է իր շարժունության ընտրության մեջ, կարող են լինել մի շարք սահմանափակումներ, որոնք կզսպեն նրանց հետագա շարժունության ուղղվածությունը: Այդ սահմանափակումներից կարելի է առանձնացնել լեզվական և մշակութային տարբերությունները: Իհարկե, այս համատեքստում հարկ է երկրները տարբերակել ըստ զարգացողների և զարգացածների երկրներ, քանի որ, մեր կարծիքով, այդ սահմանափակումներն իրենց ամբողջ ուժով կազդեն զարգացած երկրների վրա, իսկ զարգացող երկրների դեպքում, որոնք ունեն համեմատաբար ցածր սոցիալ-տնտեսական զարգացման աստիճան, այդ սահմանափակումները կարող են ազդել մասնակիորեն: Վերը նշվածի վառ օրինակ կարող է ծառայել այն փաստը, որ Եվրոպական Հանձնաժողովի իրականացրած վերջին հետազոտության համաձայն՝ ԵՄ քաղաքացիների տարեկան շարժունությունը կազմել է ԵՄ ռեզիդենտ բնակչության 0.75%-ը[19]:

Այսպիսով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացումից հետո հնարավոր է, որ Թուրքիան հայ արտագաղթողների համար դառնա նոր ուղղվածության երկիր: Իհարկե, այլ հավասար պայմաններում, թվում է, արտագաղթողների ուղղվածության փոփոխությունը չպետք է անհանգստացի կամ լուրջ մտորումների տեղիք տա: Սակայն արդի ժամանակաշրջանում, ինչպես արդեն նշել ենք, երկրների միջև միգրացիոն հոսքերը լուրջ ազդեցություն են ունենում երկրի տնտեսական, մշակութային և քաղաքական ոլորտների վրա: Այդ պատճառով մինչև սահմանի վերաբացումը պետք է փորձ արվի միգրացիոն քաղաքականության միջոցով կարգավորել և կառավարել միգրացիոն հոսքերը: Ավելին, անկախ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացման հիմնախնդրից, ժամանակն է, որ Հայաստանը, ունենալով արտագաղթի նման հիմնախնդիր, մշակի և կիրառի ճկուն միգրացիոն քաղաքականություն, այսինքն՝ այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որը ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել՝ հարմարվելով ազգային տնտեսության և արտաքին միջավայրի պահանջներին: Օրինակ՝ շատ երկրներ տնտեսական աճի/աշխուժության պայմաններում իրականացնում են խթանող, իսկ տնտեսական անկման դեպքում զսպող միգրացիոն քաղաքականություն: Իսկ միգրացիոն քաղաքականությունը պետք է լինի զգայուն միջազգային միգրացիայի հոսքերի մակարդակի հանդեպ: Այսինքն՝ արտագաղթի կամ ներգաղթի մեծ մակարդակները պետք է հանգեցնեն զսպող միգրացիոն քաղաքականության կիրառման:

Իրականում ներկայումս Հայաստանը չունի համապարփակ միգրացիոն քաղաքականություն, որը կլուծեր միգրացիոն հոսքերի բոլոր հիմնախնդիրները: Միգրացիայի հետ կապված տարբեր հարցեր կարգավորվում են առանձին օրենքներով և կառավարության

[19] Տես David Mayes and Juha Kilponen, The European Union: economics and policies, 8th edition, 2007 թ., էջ 158:

որոշումներով[20]: ՀՀ-ում միգրացիայի հարցերով զբաղվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, արտաքին գործերի նախարարությունը, առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, արդարադատության նախարարությունը, ազգային վիճակագրական ծառայությունը, ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը: Նշված մարմիններից յուրաքանչյուրը զբաղվում է միգրացիայի հետ կապված որոշակի հարցերով: Հետևաբար, մեր կարծիքով, միգրացիոն քաղաքականության մշակման և կիրառման գործընթացում պետք է համակարգվեն և միասնաբար ներկայացվեն այն բոլոր հիմնախնդիրները, որոնք գրանցվել են համապատասխան մարմինների կողմից:

Մյուս կողմից, բացի տնտեսական, մշակութային և ինստիտուցիոնալ գործոններից՝ կան նաև այլ գործոններ, որոնք ազդում են աշխատուժի/բնակչության շարժունության վրա: Այդ գործոններից կարելի է հատկապես առանձնացնել քաղաքականը: Օրինակ՝ միգրացիոն հոսքերը կարող են ազդել երկրի ազգային անվտանգության/կայունության վրա, և իր հերթին երկրի ազգային անվտանգությունը/կայունությունը կարող է ազդել միգրացիոն հոսքերի վրա: Այստեղ հարկ է նշել, որ տնտեսական և քաղաքական գործոնների ազդեցությունը/ռիսկերը լրիվ տարբեր են: Տնտեսական տեսանկյունից աշխատուժի/բնակչության շարժը հարաբերականորեն աղքատ երկրից դեպի հարաբերականորեն հարուստ երկիր կարող է երկուստեք շահավետ լինել, առաջինը կշահի փոխանցումներից, իսկ երկրորդը՝ լրացուցիչ աշխատուժի ձեռքբերումից: Անվտանգության/կայունության տեսանկյունից նույն միգրացիոն հոսքերը կարող են առաջացնել որոշակի քաղաքական ռիսկեր՝ կապված ընդունող երկրի էթնիկ կառուցվածքի փոփոխության հետ, որը կարող է հետագայում բախումների պատճառ դառնալ: Այս համատեքստում հնարավոր է, որ ստացվի լրիվ հակառակ պատկեր: Այսպես, տնտեսական տեսանկյունից արտագաղթը կարող է դիտվել որպես «ուղեղների արտահոսք» երկրի համար, իսկ ընդունող երկրի համար դա կարող է հանգեցնել գործազրկության մակարդակի ավելացմանը և բնակարանային ֆոնդի կրճատմանը: Անվտանգության/կայունության տեսանկյունից նույն միգրացիոն հոսքերը կարող են դիտվել որպես ներքին անվտանգության կամ տարածաշրջանային/միջազգային անվտանգության գրավական, քանի որ միգրանտները կարող են համարվել էթնիկական փոքրամասնություն, ովքեր հետապնդվում են իրենց երկրում և լիովին ընդունվում են մյուս երկրի կողմից:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի վերաբացումից հետո հնարավոր միգրացիոն հոսքերի շարժը գնահատելու կամ հնարավոր ռիսկերը բացահայտելու համար պետք է համադրվեն դրա հետ կապված բոլոր ծախսերը և օգուտները, իսկ վերջնական գնահատականը կախված կլինի յուրաքանչյուր երկրի որդեգրած գերակա քաղաքականությունից: Մեր կարծիքով, չնայած այն հանգամանքին, որ տնտեսագիտական տեսանկյունից աշխատուժի շարժը երկու երկրների միջև կարող է լինել

[20] Տես Տես «Migration in Armenia: A Country Profile 2008», International Organization for Migration, Geneva, 2008 թ., էջ 40:

փոխշահավետ, այն պետք է կարգավորվի պետական մակարդակով ազգային/տնտեսական անվտանգություն կամ կայունություն ապահովելու համար: Այսինքն՝ Հայաստանը, ելնելով իր ազգային առանձնահատկություններից, տնտեսական զարգացման մակարդակից, աշխարհաքաղաքական դիրքից և ժողովրդագրական տվյալներից, պետք է մշակի և կիրառի այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որը կոչված կլինի տնտեսական աճի և ազգային անվտանգության/կայունության ապահովմանը:

տ.գ.թ.
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ,
Միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոն

ГРИГОР АЙРАПЕТЯН. Анализ миграционных потоков между Арменией и Турцией. В данной статье проведен сравнительный анализ миграционных потоков Армении и Турции. Было выявлено, что: (а) основными географическими центрами притяжения мигрантов для рассматриваемых стран являются - Россия для Армении и Германия для Турции; (б) Армения и Турция не являются друг для друга основными направлениями миграции. Однако по разным оценкам в Турции количество нелегальных мигрантов из Армении составляет от 30 до 60 тыс. человек. В дальнейшем при условии открытия армяно-турецкой границы возможно расширение миграционного потока из Армении в Турцию, что связано с более высоким уровнем социально-экономического развития Турции и наличием армянской диаспоры в Турции. В этом аспекте была обоснована необходимость разработки и проведения новой миграционной политики, направленной на повышение экономического роста и обеспечение национальной безопасности, исходя из национальных особенностей, уровня экономического развития, геополитической и демографической ситуации.

к.э.н.
экономический факультет ЕГУ
кафедра международных экономических отношений

GRIGOR HAYRAPETYAN. Analysis of migration flows between Armenia and Turkey. In this article the comparative analysis of migration flows of Armenia and Turkey is done. We found that: (a) the main geographic centers of migrants' attraction are – Russia for Armenia and Germany for Turkey; (b) Armenia and Turkey are not main migration directions for each other. However based on various calculations the number of illegal Armenian migrants in Turkey amounts about 30-60 thousands of people. Later on the assumption of re-opening of Armenian-Turkish border the enlarging of migration flow from Armenia to Turkey is possible, that's caused by higher socio-economic development level of Turkey and the presence of Armenian Diaspora in Turkey. In this context the necessity of development and implementation of new migration policy aiming to increase economic growth and to provide national security based on national peculiarities, level of economic development, geopolitical and demographic situation in Armenia is grounded.

PhD in Economics
YSU Faculty of Economics
Department of International Economic Relations

Email: grigor.hayrapetyan@yahoo.com
Tel. (+374) 099209606